ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2015 թվականի օգոստոսի 1-ին Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև կնքված Հանրապետական կոլեկտիվ պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

ք. Երևան **2018 թվական,** Նոյեմբերի 12

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի և Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) IX բաժնի՝ Կառավարությունը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան և Հայաստանի գործատուների հանրապետական միությունը (այսուհետ՝ Կողմեր) որոշում են.

1. Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Պայմանագրի IV բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**IV. Սոցիալական պաշտպանություն**

Վարձու աշխատողների սոցիալական պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու նպատակով Կողմերը ստանձնում են հետևյալ պարտավորությունները.

4.1. հաշվի առնելով կողմերի շահերը՝ միջոցներ ձեռնարկել կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման և զարգացման համար:

4.2. միջոցներ ձեռնարկել արտադրությունում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության արդյունավետ համակարգ ներդնելու ուղղությամբ»:

2. Պայմանագրի IX-րդ բաժնի 9.3-րդ կետի «երեք» բառը փոխարինել «չորս» բառով:

3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

4. Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարչապետի պաշտոնակատար	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Ն. ՓԱՇԻՆՅԱՆ	Է. ԹՈՒՄԱՍՅԱՆ	Գ. ՄԱԿԱՐՅԱՆ